«ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ»
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հեղինակներ՝
Հրայր Թովմասյան
Աշոտ Ավետիսյան
Վարդան Պողոսյան

ԵՐԵՎԱՆ 2007 թ.

Հրայր Թովմասյան Ի.գ.թ. ©
Աշոտ Ավետիսյան ©
Վարդան Պողոսյան ©

Սույն ուղեցույցի հիմքում ընկած են ՀՀ Ընտրական օրենսգիրքը և ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումները, այնուհանդերձ ուղեցույցը չի կարող ՀՀ Ընտրական օրենսգրքին և ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումներին փոխարինող փաստաթուղթ համարվել:

Գրքույկի վաճառքն արգելվում է:

Շապիկի ձևավորումը Նաիրա Կարապետյան

Հեղինակները շնորհակալություն են հայտնում ԵԱՀԿ երևանյան գրասենյակին և Իտալիայի կառավարությանը սույն ձեռնարկի կազմման ու տպագրման աշխատանքները ֆինանսավորելու, ինչպես նաև ՀՀ ԿԸՀ-ի նախագահ պարոն Գարեգին Ազարյանին, ԿԸՀ-ի իրավաբանական և ծրագրամեթոդական վարչության պետ Նունե Հովհաննիսյանին և «Ընտրական համակարգերի միջազգային հիմնադրամի» փորձագետներին՝ ձեռնարկի մշակմանն աջակցելու համար:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի հարգելի անդամներ,

քվեարկության օրը դուք աշխատելու եք բազմաթիվ ընտրողների հետ: Դա լուրջ պատասխանատվություն է, միևնույն ժամանակ՝ պատիվ:

Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ նաև ընտրող է և ունի իր հայացքները, անձնական ու կուսակցական նախապատվությունները: Քվեարկության օրը մոռացեք դրանց մասին, բացառությամբ այն պահի, երբ ինքներդ եք քվեարկելու: Ձեր ցանկացած քայլ, գործողություն կամ դիրքորոշում՝ կապված ձեզ վստահված տեղամասային կենտրոնում քվեարկության անցկացման և քվեարկության արդյունքների ամփոփման հետ, պետք է բխի՝

արդարության և օրինականության, անաչառության և չեզոքության, կարգապահության և բարեխղճության, ազնվության և գործողությունների թափանցիկության սկզբունքներից:

Հանձնաժողովի անդամի պարտականությունների կատարման ողջ ընթացքում ցուցաբերեք հարգանք միմյանց և ընտրողների, տեղամասային կենտրոնում ներկա գտնվելու իրավունք ունեցող մյուս անձանց նկատմամբ, առաջնորդվեք միայն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

Կարծում եմ, որ սույն գրքույկը՝ որպես ուսումնական ձեռնարկ և ընթացակարգային ուղեցույց, օգտակար կլինի ինչպես տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների ուսուցանման, այնպես էլ տեղամասային ընտրական հանձնաժողովի աշխատանքները ՀՀ Ընտրական օրենսգրքին և ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումներին համապատասխան կազմակերպելու համար:

ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ՝ Գ. Ազարյան

Ընտրական գործընթացում ներգրավված մարմիններից տեղամասային ընտրական հանձնաժողովը /այսուհետ՝ ՏԸՀ/ ընտրողներին ամենամոտ կանգնած՝ նրանց հետ անմիջականորեն շփվող օղակն է: Առավելապես ՏԸՀ-ի անդամների կատարած աշխատանքով է պայմանավորված հասարակության վստահությունն ընտրությունների նկատմամբ:

ՏԸՀ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ

ՏԸՀ-ները կազմավորվում են քվեարկության օրվանից **ոչ շուտ, քան 19, և ոչ ուշ, քան 16 օր առաջ:**

ՏԸՀ-ի անդամներին նշանակում են համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի /այսուհետ ԸԸՀ/ անդամները՝ ԸԸՀ մեկ անդամ՝ ՏԸՀ մեկ անդամ սկզբունքով:

ՏԸՀ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՏԸՀ-ի լիազորությունները սահմանված են ՀՀ Ընտրական օրենսգրքով /այսուհետ ԸՕ/, համաձայն որի ՏԸՀ-ն՝

- կազմակերպում է քվեարկությունը, ամփոփում դրա արդյունքները տեղամասում, այդ արդյունքները փակցնում է տեղամասային կենտրոնում և ներկայացնում է ԸԸՀ.
- քվեարկությամբ լուծում է վիճելի քվեարկության ծրարների և քվեաթերթիկների հարցը.
- պայմաններ է ստեղծում տեղամասում ընտրությունների ազատ անցկացման համար, ապահովում է քվեարկության՝ ԸՕ-ով սահմանված կարգը.
- դիմում է իրավասու պետական մարմիններ՝ ԸՕ-ի խախտման դեպքերում.
- իրականացնում է ԸՕ-ով նախատեսված այլ լիազորություններ:

ՀԻՇԵՔ

Քվեարկության ընթացքում քվեարկության կարգի խախտման բոլոր դեպքերը հանձնաժողովի մեկ ան դամի կամ մեկ վստահված անձի պահանջով արձանագրվում են ՏԸՀ-ի գործավարության մատյանում:

ԸՕ հոդված 57 կետ 6

ՏԸՀ-ի որոշումները, գործողությունները, անգործությունը բողոքարկելու վերաբերյալ դիմումները, այդ թվում՝ քվեարկության արդյունքների վերահաշվարկի պահանջի մասին դիմումները, ներկայացվում են համապատասխան ԸԸՀ:

ԸՕ հոդված 40 կետ 1

ՏԸՀ լիազորությունները դադարեցվում են քվեարկության օրվանից 14 օր հետո, իսկ վերաքվեարկություն անցկացվելու դեպքում՝ վերաքվեարկության օրվանից 14 օր հետո:

ՏԸՀ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Իրավունքներ և պարտականություններ

ՏԸՀ անդամները՝

- իրավունք ունեն նախապես ծանոթանալ հանձնաժողովի քննարկմանը ներկայացվող հարցերին և փաստաթղթերին, ելույթներ ունենալ հանձնաժողովի նիստերում, ներկայացնել առաջարկություններ և պահանջել, որ այդ առթիվ անցկացվի քվեարկություն, նիստի մասնակիցներին տալ հարցեր և ստանալ սպառիչ պատասխաններ.
- պարտավոր են մասնակցել հանձնաժողովի աշխատանքներին և կատարել օրենքով իրենց վրա դրված պարտականությունները.
- պարտավոր են մասնակցել քվեարկությանը՝ քվեարկել կողմ, դեմ կամ ձեռնպահ.
- պարտավոր են կատարել հանձնաժողովի նախագահի կողմից իր իրավասության սահմաններում տրված հանձնարարությունները.
- իրենց լիազորության ժամանակահատվածում կարող են ազատվել արտադրական կամ ծառայողական պարտականություններ կատարելուց, այդ ընթացքում նրանց աշխատավարձը հիմնական աշխատավայրում պահպանվում է:

ՏԸՀ-ի անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը

ՏԸՀ անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են հետևյալ դեպքերում՝

- եթե նա կորցրել է ընտրական իրավունքը.
- նրա մահվան դեպքում.
- երեք անհարգելի բացակայության դեպքում՝ հանձնաժողովի որոշումով.
- իր դիմումի համաձայն.
- եթե նա զորակոչվել է:

ՏԸՀ անդամն իր լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին դիմումը՝

- ուղղում է վերադաս ԸԸՀ.
- նշում է անուն, հայրանունը, ազգանունը, ՏԸՀ-ի համարը, դիմում ներկայացնելու տարին, ամիսը, ամսաթիվը և ստորագրությունը.

- պետք է պարունակի ՏԸՀ այդ անդամին նշանակած ԸԸՀ անդամի մակագրությունը:

Դիմումատուն դիմումը ներկայացնում է անձամբ, դիմումին կցելով հանձնաժողովի անդամի իր վկայականը /վկայականի կորստյան դեպքում այդ մասին նշում է կատարվում դիմումում/:

Եթե ՏԸՀ անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվել են, ապա այդ անձը երեք ամսվա ընթացքում չի կարող կրկին առաջադրվել ընտրական հանձնաժողովների կազմում:

<u>ՏԸՀ նախագահի, նախագահի տեղակալի և քարտուղարի ընտրությունները</u>

ՏԸՀ նախագահի, նախագահի տեղակալի և քարտուղարի ընտրության նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա են ՏԸՀ անդամների կեսից ավելին:

Եթե հանձնաժողովի նախագահի պաշտոնի համար քվեարկվել է մեկ թեկնածու, ապա նա ընտրված է համարվում, եթե ստացել է քվեարկության մասնակիցների ձայների կեսից ավելին:
Եթե հանձնաժողովի նախագահի պաշտոնի համար քվեարկվել է երկու թեկնածու, ապա ընտրված է համարվում քվեարկության մասնակիցների ձայների կեսից ավելին ստացած թեկնածուն:

Եթե նախագահի պաշտոնի համար քվեարկվել է երկուսից ավելի թեկնածու, և նրանցից ոչ մեկը չի ստացել քվեարկության մասնակիցների ձայների կեսից ավելին, ապա առավել ձայներ ստացած երկու թեկնածուների միջև անցկացվում է կրկնական քվեարկություն:

Եթե ՏԸՀ-ն նախատեսված ժամկետում հանձնաժողովի նախագահ չի ընտրում, ապա համապատասխան ՏԸՀ-ի նախագահին նշանակում է ԸԸՀ-ի նախագահը՝ երկօրյա ժամկետում համապատասխան հանձնաժողովի կազմից:

Նախագահի տեղակալի և քարտուղարի ընտրությունը կատարվում է նախագահի ընտրության համար սահմանված կարգով:

ՏԸՀ նախագահի, տեղակալի և քարտուղարի պաշտոնանկությունը

ԸՕ-ի 38-րդ հոդվածի 1 կետի համաձայն՝ հանձնաժողովի նախագահը, տեղակալը և քարտուղարը կարող են պաշտոնանկ արվել հանձնաժողովի անդամների ձայների ընդհանուր թվի երկու երրորդով ընդունված որոշմամբ: Ընդ որում հանձնաժողովի նախագահը կարող է պաշտոնանկ արվել ընտրության օրվանից **ոչ ուշ, քան 4 օր առաջ:**

Եթե պաշտոնանկ է արվել հանձնաժողովի նախագահը, տեղակալը կամ քարտուղարը, ապա նույն նիստում ԸՕ-ով սահմանված կարգով կատարվում է հանձնաժողովի նախագահի, տեղակալի կամ քարտուղարի նոր ընտրություն:

ՎԱՍՏԱՀՎԱԾ ԱՆՁԻՆՔ, ԴԻՏՈՐԴՆԵՐ ԵՎ ՁԼՄ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐ

Ընտրությունների թափանցիկությունն ու հրապարակայնությունը ապահովելու նպատակով ընտրական գործընթացի մասնակից են դարձվել նաև վստահված անձինք, դիտորդները և ՁԼՄ ներկայացուցիչները, որոնց իրավունքները, պարտականությունները և գործունեության երաշխիքները սահմանված են ԸՕ-ով:

Վստահված անձինք ներկայացնում են թեկնածուների, կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների շահերը:
Վստահված անձն իրավունք ունի խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցելու հանձնաժողովի նիստերին: Սա նշանակում է, որ հանձնաժողովի նիստերի ժամանակ վստահված անձը, նիստը վարողի թույլտվությամբ, կարող է մասնակցել համապատասխան հարցի քննարկմանը, ելույթներ ունենալ, հարցեր տալ, առաջարկություններ կատարել:

Դիտորդները ներկայացնում են Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա հասարակական կազմակերպություններ, պետություններ և միջազգային կազմակերպություններ:

Վստահված անձանց, դիտորդների և ՁԼՄ ներկայացուցիչների հիմնական նպատակներն են.

- հանրության համար ապահովել ընտրությունների հրապարակայնությունն ու թափանցիկությունը.
- բարձրացնել հասարակական վստահությունը ընտրական գործընթացների նկատմամբ.
- վեր հանել ընտրությունների ընթացքում տեղ գտած խախտումներն ու բացթողումները.
- ապահովել տեղեկատվություն, որի հիման վրա կարելի է լուծել ընտրական վեճերը, ինչու չէ, նաև կատարելագործել ընտրական օրենսդրությունը:

ՏԸՀ-ի նախագահը ընտրական հանձնաժողովների նիստերի և քվեարկության ընթացքում վստահված անձանց, դիտորդների և ՁԼՄ ներկայացուցիչների համար ապահովում է աշխատանքային անհրաժեշտ և հավասար պայմաններ:

Վստահված անձանց, դիտորդների և ԶԼՄ ներկայացուցիչների իրավունքների որևէ սահմանափակում չի թույլատրվում:

ՀԻՇԵՔ

Ոչ ոք, այդ թվում՝ ընտրական հանձնաժողովները, իրավունք չունեն վստահված անձանց դուրս հանելու քվեարկության սենյակից կամ ցանկացած այլ կերպ նրանց մեկուսացնելու հանձնաժողովի աշխատանքներին ներկա գտնվելուց, բացառությամբ նրանց ձերբակալելու կամ կալանավորելու դեպքերի:

ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Հանրապետության Նախագահի, Ազգային ժողովի, տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները, ինչպես նաև հանրաքվեներն անցկացվում են ընդհանուր, հավասար, ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ:

/ՀՀ Սահմանադրություն, հոդված 4/

ՀԻՇԵՔ

Ընտրողի քվեարկության իրավունքի ցանկացած սահմանափակում հետապնդվում է օրենքով:

Այսինքն՝ արգելվում է ընտրողի քաղաքական հայացքներից, այս կամ այն թեկնածուին, կուսակցությանը, կուսակցությունների դաշինքին տրված նախապատվությունից կամ այլ հիմքից ելնելով՝ խոչընդոտել կամ սահմանափակել նրա քվեարկության իրավունքը:

ՏԸՀ-Ի ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

ՏԸՀ-ի աշխատանքները կազմակերպում և ղեկավարում է հանձնաժողովի նախագահը:

ՏԸՀ-ի հերթական նիստերը սահմանված են ԸՕ-ով:

1. ՏԸՀ *առաջին նիստը* տեղամասային կենտրոնում հրավիրում է ԸԸՀ նախագահը՝ ՏԸՀ-ի կազմավորման հաջորդ օրը՝ ժամը 12.00-ին, որը վարում է ՏԸՀ-ի տարիքով ավագ անդամը:

2. *Քվեարկության նախորդ օրը ՏԸՀ նիստը*, որում վիճակահանությամբ որոշված քվեաթերթիկներն ստորագրող հանձնաժողովի անդամները մինչև ժամը 24.00-ն, ԿԸՀ սահմանած կարգով պարտավոր են ստորագրել բոլոր քվեաթերթիկները և ընտրողների ցուցակների բոլոր էջերը:

3. *Քվեարկության օրը՝ ժամը 7.00-ին, ՏԸՀ նիստը*, որում վիճակահանությամբ որոշում է ՏԸՀ անդամների գործառույթները և այդ գործառույթների 2 ժամը մեկ պարբերականությամբ հերթափոխը:

4. Քվեարկության ավարտից հետո՝ *քվեարկության արդյունքների ամփոփման նիստը*:

Համապետական ընտրությունների ժամանակ ՏԸՀ-ի **հերթական** նիստն իրավազոր է անկախ նիստին ներկա անդամների թվից, եթե սպառված են հանձնաժողովի՝ նիստ գումարելու համար անհրաժեշտ թվով անդամներին նիստին մասնակից դարձնելու բոլոր հնարավորությունները: Նշված դրույթները չեն տարածվում հանձնաժողովի նախագահ, նախագահի տեղակալ և հանձնաժողովի քարտուղար ընտրելու դեպքերի վրա:

Հանձնաժողովների նիստերը դռնբաց են: Դրանց կարող են մասնակցել ԸՕ-ով նիստին ներկա գտնվելու իրավունք ունեցող անձինք:

!

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ. <u>ՏԸՀ-ի նիստերին կարող են մասնակցել, քվեարկության ընթացքում և քվեարկության արդյունքները ամփոփելու ընթացքում տեղամասային կենտրոնում կարող են գտնվել.</u>

1. ՏԸՀ-ի անդամները,
2. վերադաս ընտրական հանձնաժողովի անդամները,
3. վստահված անձինք (յուրաքանչյուր թեկնածուի, կուսակցության, կուսակցությունների դաշինքի մեկական),
4. տեղական դիտորդները (մեկական),
5. միջազգային դիտորդներ (երկու և մեկ թարգմանիչ),
6. ԶԼՄ-ների ներկայացուցիչները

Հանձնաժողովի անդամները, վստահված անձինք, դիտորդները պետք է կրեն կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած նմուշի համապատասխան վկայականներ, իսկ ԶԼՄ-ների ներկայացուցիչները՝ իրենց վկայականները:

Համապետական ընտրություններ նշանակվելու օրվանից սկսած՝ մինչև ընտրությունների արդյունքների ամփոփման վերաբերյալ որոշում ընդունելը ներառյալ, որոշումը համարվում է ընդունված, եթե դրա օգտին կողմ քվեարկած

հանձնաժողովի անդամների թիվը մեծ է դեմ քվեարկած հանձնաժողովի անդամների թվից:

Քվեարկությունը կարող է կրկնվել, եթե ինչ որ կապակցությամբ խանգարվել է հանձնաժողովի որևէ անդամի քվեարկությունը:
Ընտրական հանձնաժողովի անդամը պարտավոր է մասնակցել հանձնաժողովի աշխատանքներին և կատարել օրենքով իր վրա դրված պարտականությունները: Պարտականությունների անհարգելի չկատարումը հանգեցնում է օրենքով սահմանված պատասխանատվության:

Ընտրական փաստաթղթեր և քվեարկության անցկացման համար անհրաժեշտ նյութեր

Ընտրությունները նախապատրաստելու և անցկացնելու համար ՏԸՀ-ին տրամադրվում են ընտրական փաստաթղթեր, գրենական պիտույքներ և այլ նյութեր:
ՏԸՀ-ի նախագահը պատասխանատվություն է կրում դրանց ստացման, տեղափոխման և պահպանության համար:

Ընտրական փաստաթղթեր են համարվում.

-քվեաթերթիկները.
-ընտրողների ցուցակները
-քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունները.
-ՏԸՀ մատյանը և այլն:

ՏԸՀ-ն իր կազմավորումից հետո ԸԸՀ-ից ստանում է՝

- ✓ Հայաստանի Հանրապետության Ընտրական օրենսգիրքը,
- ✓ ԿԸՀ-ի որոշումները,
- ✓ ՏԸՀ-ի անդամների վկայականները, համարակալված էջերով և վերադաս հանձնաժողովի կողմից կնքված ՏԸՀ գործավարության մատյանը,
- ✓ Տեղամասային կենտրոնի ցուցանակը /եթե այդպիսին վաղօրոք չի ստացվել/, կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) ընտրական ցուցակները և իրենց ընտրատարածքում գրանցված թեկնածուների ցուցակը,
- ✓ գրենական պիտույքներ:

Քվեարկությունից երկու օր առաջ ՏԸՀ-ը ընտրողների ցուցակները վարող լիազոր մարմնի համապատասխան ստորաբաժանման ղեկավարից ստանում է՝

- ✓ ընտրողների ցուցակը /երկու օրինակից/,
- ✓ ընտրողների լրացուցիչ ցուցակներ կազմելու համար անհրաժեշտ ձևաթղթեր,
- ✓ ոստիկանության ծառայողների լրացուցիչ ցուցակը /երկու օրինակից/,
- ✓ տեղամասային կենտրոնից դուրս քվեարկելու իրավունք ունեցող ընտրողների ցուցակը /այն ընտրողների լրացուցիչ ցուցակը, որոնք գտնվում են ստացիոնար բուժհաստատություններում/:

Զինծառայողների ընտրական ցուցակն ստանում է համապատասխան ԸԸՀ նախագահից՝ զմռսված ծրարով, որը բացվում է միայն քվեարկության օրը ՏԸՀ-ում,
Կալանքի տակ պահելու լիազորություն ունեցող հաստատությունում ձևավորված ՏԸՀ-ը կալանքի տակ գտնվող քաղաքացիների ընտրական ցուցակն ստանում է միայն այդ հաստատության ղեկավարից քվեարկությունից երկու օր առաջ:

Քվեարկության նախորդ օրը ՏԸՀ-ն ԸԸՀ-ից ստանում է՝

- ✓ քվեաթերթիկներ (տեղամասում ընտրողների թվի մինչև երեք տոկոս ավելի քանակով).
- ✓ քվեարկության ծրարները (տեղամասում ընտրողների թվի մինչև երեք տոկոս ավելի քանակով),
- ✓ չհրկիզվող պահարան (եթե տեղամասային կենտրոնում այդպիսին չկա),
- ✓ ՏԸՀ-ի կնիքը (փաթեթավորված և կնքված),
- ✓ թանաքաման,
- ✓ քվեաթերթիկները լրացնելու ցուցումներ (քվեաթերթիկների նմուշ),
- ✓ ընտրության անցկացման տարեթվի նշումով դրոշմակնիք, (եթե տվյալ տեղամասում քվեարկելու են զինվորականներ),
- ✓ միաժամանակ մի քանի ընտրություն անցկացվելու դեպքում յուրաքանչյուր քվեարկության համար առանձին քվեատուփ և մեկ շրջիկ քվեատուփ, եթե ՏԸՀ-ին ներկայացվել է ստացիոնար բժշկական հաստատությունում քվեարկություն կազմակերպելու համար քաղաքացիների լրացուցիչ ցուցակ,
- ✓ քվեարկության մասնակիցների թվի վերաբերյալ ՏԸՀ-ի արձանագրության և դրանից քաղվածքի ձևաթղթեր,
- ✓ քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունների ձևաթղթեր (յուրաքանչյուր /մեծամասնական և համամասնական/ ընտրակարգով ընտրության համար առնվազն չորսական օրինակներ) և դրանից քաղվածքի ձևաթղթեր,
- ✓ փաթեթներ (ծրարներ) հետևյալ փաստաթղթերը փաթեթավորելու համար.
    1. ընտրողների ցուցակը,

2. չօգտագործված ծրարները,
3. մարված քվեաթերթիկները,
4. օգտագործված ելունդները,
5. անվավեր քվեաթերթիկները,
6. յուրաքանչյուր թեկնածուին, կուսակցությանը, կուսակցությունների դաշինքին կողմ քվեարկված քվեաթերթիկները,
7. սահմանված նմուշի քվեարկության ծրարները,
8. տեսակավորված և փաթեթավորված ընտրական փաստաթղթերը հավաքելու համար մեկանգամյա օգտագործման հատուկ պարկ /միաժամանակ մի քանի ընտրություն անցկացվելու դեպքում՝ յուրաքանչյուր քվեարկության ընտրական փաստաթղթերի համար մեկ պարկ/:

ՏԸՀ-ի խնդիրները կազմավորումից մինչև քվեարկության նախորդ օրը

Քվեարկության օրը դուք աշխատելու եք բավական երկար և համատեղ կատարելու եք պատասխանատու աշխատանք, ուստի խիստ կարևոր է առաջին իսկ օրվանից համապատասխան աշխատանքային մթնոլորտի ձևավորումը:

- Ծանոթացեք ԸՕ-ին և ԿԸՀ որոշումներին:
- Մասնակցեք բոլոր նիստերին և դասընթացներին:
- Ուսումնասիրեք գործավարության մատյանը և ծանոթացեք դրա լրացման կարգին:
- Համատեղ քննարկեք հնարավոր իրավիճակներ և փորձեք գտնել լուծումներ:
- Ձեզ մոտ նշեք տեղամասային կենտրոնի, ՏԸՀ նախագահի /անդամների/, ինչպես նաև վերադաս ԸԸՀ-ի հեռախոսահամարները:

ՏԸՀ առաջին նիստից հետո հանդիպեք տեղամասային կենտրոնի շենքը տնօրինող հաստատության ղեկավարին և նրա հետ

- պարզեք, թե որ տարածքն է ավելի հարմար քվեարկության և քվեարկության արդյունքների ամփոփման աշխատանքներն իրականացնելու համար.
- ստուգեք հեռախոսի, չիրկիզվող պահարանի, բավարար քանակով սեղանների, աթոռների և այլ անհրաժեշտ պարագաների առկայությունը.
- հավաստիացեք, որ պատշաճ ձևով փակցված են ընտրողների ցուցակները.

- պայմանավորվեք, որ քվեարկության օրը քվեարկության համար նախատեսված տարածքի դուռը բացեն **ժամը 6:30-ին**, որպեսզի քվեարկությունը նախապատրաստելու համար ժամանակ ունենաք:

ՏԸՀ նախագահը պետք է.

- համոզվի, որ քվեարկության օրը ՏԸՀ բոլոր անդամները կլինեն տեղամասային կենտրոնում.
- կազմի համապատասխան ցուցակ և ապահովի բոլոր անհրաժեշտ պարագաների առկայությունը տեղամասային կենտրոնում.
- ԸԸՀ-ից ստանա քվեարկության համար անհրաժեշտ նյութերն ու պարագաները և միջոցներ ձեռնարկի քվեարկությունից **առնվազն 24 ժամ առաջ** քվեարկության սենյակի վերջնական կահավորումն ապահովելու համար:

!

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ. Քվեարկության սենյակի կահավորման հետ կապված խնդիրներով դիմեք համայնքի ղեկավարին: Համաձայն ԸՕ-ի 16-րդ հոդվածի 2-րդ կետի՝ տեղամասային կենտրոնում քվեարկության բնականոն ընթացքն ապահովող անհրաժեշտ կահավորման համար պատասխանատու է համապատասխան համայնքի ղեկավարը:

<u>քվեարկության սենյակի գծագիրը</u>



Քվեարկության խցիկները տեղադրվում են միմյանցից առնվազն 1 մետր հեռավորության վրա:

Եթե քվեարկության խցիկը ամրացված է պատին, ապա 2 մետր հեռավորության վրա, իսկ դրա անհնարինության դեպքում՝ 1.5 մետր հեռավորության վրա, սահմանվում է համապատասխան գոտի՝ արգելափակիչ ժապավենով, որն ունի մեկ մուտք և մեկ ելք: Այդ գոտում քվեարկության խցիկների քանակից ավելի թվով ընտրողների գտնվելն արգելվում է:

ՏԸՀ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՆԱԽՈՐԴ ՕՐԸ

1. Նախապես տեղեկացեք ՏԸՀ կնիքի փաթեթի, դրոշմակնիքի /եթե տեղամասում քվեարկելու են զինծառայողներ/, քվեաթերթիկների, քվեարկության ծրարների, քվեախցիկների, քվեատուփերի, շրջիկ արկղերի, քվեարկությունն անցկացնելու համար անհրաժեշտ այլ փաստաթղթեր ու պարագաներ ստանալու ժամի և վայրի մասին, որպեսզի կարողանաք ներկա գտնվել:

2. ԸԸՀ-ից քվեաթերթիկները, քվեարկության ծրարները և ընտրողների ցուցակները տեղամասային կենտրոն բերելուց հետո հանձնաժողովի նիստում վիճակահանությամբ որոշեք քվեաթերթիկներն ստորագրող հանձնաժողովի 3 անդամներին, ովքեր պարտավոր են սահմանված կարգով մինչև ժամը 24:00 ստորագրել բոլոր քվեաթերթիկները և ընտրողների ցուցակների բոլոր էջերը: Այդ վիճակահանությանը մասնակցում են ՏԸՀ-ի բոլոր անդամները, այդ թվում՝ հանձնաժողովի նախագահը, տեղակալը, քարտուղարը: Գործավարության մատյանում կատարեք գրառում այդ մասին:

! ***ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ. Գործավարության մատյանում կատարվող գրառումների համար նախատեսված են համապատասխան բաժիններ, էջեր և ձևաթղթեր, որոնք հնարավորություն են տալիս հեշտությամբ կատարել համապատասխան գրառումները:***

Քվեաթերթիկները և ընտրողների ցուցակների (այդ թվում՝ ստացիոնար բժշկական հաստատությունում քվեարկություն կազմակերպելու համար ընտրողների ցուցակների և քվեարկության օրը գործուղման մեջ գտնվող ոստիկանության ծառայողների (եթե հատկացվել է) լրացուցիչ ցուցակների) էջերը ստորագրող հանձնաժողովի անդամներին որոշելու համար ՏԸՀ-ն անցկացնում է մեկ վիճակահանություն, որի ընթացքում որոշում են այն երեք անդամներին, որոնք պետք է ստորագրեն համամասնական ընտրակարգով ընտրությունների քվեաթերթիկները, ինչպես նաև հանձնաժողովի այն երեք անդամներին, որոնք պետք է ստորագրեն մեծամասնական ընտրակարգով ընտրությունների քվեաթերթիկները:

Վիճակահանությունը կազմակերպելու նպատակով հանձնաժողովի նախագահը նիստին ներկա հանձնաժողովի անդամների թվին

համապատասխան պատրաստում է իրարից չտարբերվող թերթիկներ, որոնցից երեքի վրա գրում է «մեծամասնական», մյուս երեքի վրա «համամասնական» բառերը: Թերթիկները քառապատիկ ծալում է այնպես, որ չտարբերվեն միմյանցից և գցում վիճակահանության համար նախատեսված արկղի մեջ:

Ըստ հանձնաժողովի անդամների ազգանունների, իսկ ազգանունները համընկնելու դեպքում՝ ըստ անունների (հայրանունների) այբբենական հերթականության, հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ վիճակահանության արկղից հանում է մեկ թերթիկ:

Համապատասխան նշումով թերթիկներ հանած հանձնաժողովի անդամները ստորագրում են տվյալ ընտրակարգով ընտրության համար նախատեսված քվեաթերթիկները:

Ազգային ժողովի ընտրությունների դեպքում ընտրողների ցուցակների էջերը ստորագրում են Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով ընտրությունների քվեաթերթիկներն ստորագրող հանձնաժողովի անդամները:

3. Ըստ ելունդների համարների՝ հաշվեք բոլոր քվեաթերթիկները հարյուրական քվեաթերթիկ՝ հերթական համարներով, քվեաթերթիկների վրա առկա անցքերի մասով կապեք:

4. Քվեաթերթիկները կապելուց հետո հանձնաժողովի՝ վիճակահանությամբ որոշված անդամները պետք է ստորագրեն ՏԸՀ-ին հատկացված բոլոր քվեաթերթիկները:

5. Ստորագրությունները դրվում են քվեաթերթիկների հակառակ կողմում՝ քվեաթերթիկի հատման գծից ներքև, այնպես, որ քվեաթերթիկները սահմանված կարգով մարելու ժամանակ ստորագրությունների ամբողջականությունը պահպանվի:

6. Ստորագրելու ժամանակ ստուգեք ելունդների համարների հերթականությունը: Կրկնվող համարով քվեաթերթիկը /եթե այդպիսին կա/ կապից հանեք, քվեաթերթիկի վրա գրեք «խոտան» բառը և անհապաղ մարեք:

7. Գործավարության մատյանում արձանագրեք տպագրական խոտանի պատճառով քվեաթերթիկների՝ ըստ համարների հերթականության խախտումը:

8. Հաշվեք քվեարկության ծրարները և կապեք 100-ական փաթեթներով:

9. Քվեարկության ծրարների, քվեաթերթիկների կապերը, ընտրողների ցուցակները, դրոշմակնիքը և կնիքի փաթեթը տեղադրեք չհրկիզվող պահարանում:

10. Թղթով սոսնձեք չհրկիզվող պահարանը: Սոսնձված թղթի վրա պետք է ստորագրեն հանձնաժողովի նախագահը, տեղակալը և քարտուղարը: Ցանկության դեպքում հանձնաժողովի մյուս անդամներն ու վստահված անձինք նույնպես կարող են ստորագրել:
11. Չհրկիզվող պահարանը հանձնեք պահպանության ոստիկանության աշխատակցին՝ կազմելով հանձնման-ընդունման մասին համապատասխան արձանագրություն:

! **ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ. Ստացիոնար բուժում իրականացնող բժշկական հաստատություններում ստացիոնար բուժման մեջ գտնվող՝ քվեարկության օրը տեղամասային կենտրոն ինքնուրույն ներկայանալու հնարավորություն չունեցող քաղաքացիների համար քվեարկությունը կարող է կազմակերպվել ստացիոնար բժշկական հաստատությունում:**

Եթե ձեր տեղամասն ընդգրկում է ստացիոնար բուժում իրականացնող բժշկական հաստատություն /հաստատություններ/, ապա ընտրողների վերջնական ցուցակի հետ միասին լիազոր մարմինը քվեարկության օրվանից 2 օր առաջ ՏԸՀ նախագահին տրամադրում է նաև ստացիոնար բուժում իրականացնող բժշկական հաստատությունում քվեարկությանը մասնակցող ընտրողների լրացուցիչ ցուցակը:

ՏԸՀ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՕՐԸ

I. <u>ՏԸՀ նիստը</u>

Ժամը 7:00

ՏԸՀ անդամները ներկայանում են տեղամասային կենտրոն, սկսվում է ՏԸՀ նիստը:

! **ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ. Եթե քվեարկության օրը ՏԸՀ անդամների թիվը պակաս է 6-ից, ապա ՏԸՀ նախագահը /կամ տեղակալը/ այդ մասին անհապաղ տեղեկացնում է ԸԸՀ նախագահին:**

ՏԸՀ նախագահը, ստուգելով հատուկ չհրկիզվող պահարանին սոսնձված թղթի ամբողջականությունը, ոստիկանության աշխատակիցներից ընդունում է

պահարանը, որի մասին գործավարության մատյանում կազմվում է արձանագրություն:

Հանձնաժողովն իր նիստում վիճակահանությամբ որոշում է հանձնաժողովի անդամների միջև աշխատանքային պարտականությունների բաշխումը: Հանձնաժողովի նախագահը և քարտուղարը վիճակահանությանը չեն մասնակցում: Հանձնաժողովը յուրաքանչյուր հերթափոխի համար անցկացնում է առանձին վիճակահանություն:

<u>Վիճակահանությունն իրականացվում է հետևյալ կերպ.</u>

! **ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ. ՏԸՀ-ը յուրաքանչյուր հերթափոխի համար անցկացնում է առանձին վիճակահանություն: Քվեարկության օրը՝ առավոտյան ժամը 7:00-ին, ՏԸՀ-ում անցկացվում է 6 վիճակահանություն՝ 6 տարբեր հերթափոխերի համար՝ 1) ժամը 8:00-10:00-ի, 2) ժամը 10:00-12:00-ի, 3) ժամը 12:00-14:00-ի, 4) ժամը 14:00-16:00-ի, 5) ժամը 16:00-18:00-ի, 6) ժամը 18:00-20:00-ի համար:**

⇒ հանձնաժողովի նախագահը նիստին ներկա անդամների թվին համապատասխան պատրաստում է միանման թերթիկներ, որոնց վրա գրված է.

- «Քվեաթերթիկ և քվեարկության ծրար հատկացնող»,
- «Ընտրողների գրանցումն իրականացնող» (մեկական թերթիկ մինչև 1000 ընտրող ունեցող տեղամասերում, երկուական թերթիկ 1000-ից ավելի ընտրող ունեցող տեղամասերում, 2 հատ թերթիկի դեպքում նշվում են նաև համապատասխանաբար «1-ին ցուցակ», «2-րդ ցուցակ» բառերը)
- «Քվեարկության ծրարներ կնքող և քվեատուփի համար պատասխանատու»,
- «Շրջիկ արկղի միջոցով քվեարկություն անցկացնող» (համապետական ընտրությունների դեպքում, եթե ՏԸՀ ներկայացվել է ստացիոնար բժշկական հաստատությունում քվեարկություն կազմակերպելու համար քաղաքացիների լրացուցիչ ցուցակ) մեկական թերթիկ:

⇒ Թերթիկները՝ նաև նշում չպարունակող, քառապատիկ ծալում և գցում է վիճակահանության արկղի մեջ:

⇒ Հանձնաժողովի անդամներն այբբենական հերթականությամբ հանում են մեկական թերթիկ և բարձրաձայն կարդում գրվածը, ըստ

անցկացվող վիճակահանությունների ձևավորվում է յուրաքանչյուր հերթափոխը:

⇒ **Շրջիկ արկղի միջոցով քվեարկություն** անցկացնող հանձնաժողովի անդամին որոշելուց հետո «Շրջիկ արկղի միջոցով քվեարկություն անցկացնող» նշումը պարունակող թերթիկը հանվում է վիճակահանությունից: Շրջիկ արկղի միջոցով քվեարկություն անցկացնող հանձնաժողովի անդամը մասնակցում է 2 ժամը մեկ պարբերականությամբ գործառույթների հերթափոխը որոշելու համար անցկացվող հաջորդ վիճակահանություններին:

Շրջիկ արկղի միջոցով քվեարկություն անցկացնող հանձնաժողովի անդամը վիճակահանության արդյունքով որոշված մյուս գործառույթը (գործառույթները) իրականացնում է ստացիոնար բժշկական հաստատությունում քվեարկությունն անցկացնելուց հետո: Ստացիոնար բժշկական հաստատությունում քվեարկությունն անցկացնելու ժամանակ շրջիկ արկղի միջոցով քվեարկություն անցկացնող հանձնաժողովի անդամի՝ վիճակահանությամբ որոշված գործառույթը, ՏԸՀ նախագահի հանձնարարությամբ, իրականացնում է հանձնաժողովի այլ անդամ:

⇒ **Անցկացված վիճակահանությունների մասին գործավարության մատյանում կատարվում է համապատասխան գրառում:**

Հանձնաժողովի նախագահը, վիճակահանությունների արդյունքներին համապատասխան, ապահովում է հանձնաժողովի անդամների՝ 2 ժամը մեկ պարբերականությամբ հերթափոխը:

II. <u>ՏԸՀ աշխատանքները մինչև տեղամասային կենտրոնի բացումը</u>

🕘 **Մինչև ժամը 8:00**

ՏԸՀ նախագահը (կամ նախագահի տեղակալը) քվեարկությանը ներկա գտնվելու իրավունք ունեցող անձանց ներկայությամբ.

⇒ Բացում է չհրկիզվող պահարանը, հանում է քվեաթերթիկները, քվեարկության ծրարներն ու փաթեթավորված կնիքը (ներկաները կարող են ստուգել կնիքի փաթեթի ամբողջական և կնքված լինելը):

⇒ Բացում է փաթեթավորված կնիքը, գործավարության մատյանում կնիք դնելով՝ հայտարարում է կնիքի համարը:

⇒ Ստուգում է քվեատուփի և շրջիկ արկղի դատարկ լինելը, իսկ քվեարկությանը ներկա գտնվելու իրավունք ունեցող անձինք հավաստիանում են դրանում:

⇒ Փակում և կնքում է քվեատուփն ու շրջիկ արկղը:

⇒ Ընտրական տեղամասում ընդգրկված բնակելի շենքերի, տների հասցեները և կնիքը հանձնում է քվեարկության ծրարները կնքող և քվեատուփի համար պատասխանատու անդամին:

⇒ Ընտրողների ցուցակները, դրոշմակնիքը (եթե այդպիսին կա) հանձնում է գրանցման համար պատասխանատու անդամներին:

⇒ Քվեաթերթիկներն ու քվեարկության ծրարները՝ հարյուրական փաթեթներով հանձնում է քվեաթերթիկներ ու քվեարկության ծրարներ հատկացնող անդամներին:

⇒ **Վերոհիշյալ բոլոր գործողությունների մասին ՏԸՀ նախագահը համապատասխան գրառում է կատարում գործավարության մատյանում:**

🕗 **Ժամը 8:00**

Ընտրական տեղամասը հայտարարում է բացված: Այդ պահից թույլատրվում է ընտրողների մուտքը տեղամասային կենտրոն և սկսվում է քվեարկությունը:

III. Տեղամասային կենտրոնի բացումը և կենտրոն մուտք գործելը

Քվեարկության բնականոն ընթացքն ապահովելու, ընտրողների ազատ կամաարտահայտման վրա կողմնակի ազդեցությունները հնարավորինս բացառելու և քվեարկության կարգի պահպանման համապատասխան մթնոլորտ ստեղծելու համար էական նշանակություն ունի տեղամասային կենտրոն մուտքի և ելքի կարգավորումը:

Արգելվում է տեղամասային կենտրոն զենքով, զինամթերքով մուտք գործելը՝ բացառությամբ ընտրությունների բնականոն ընթացքի վտանգման դեպքերի:

Այդ դեպքերում տեղամասային կենտրոն զենքով, զինամթերքով մուտք գործելը թույլատրում է ՏԸՀ նախագահը կամ տեղակալը:

! Յուրաքանչյուր նման դեպք պետք է արձանագրվի գործավարության մատյանում:

Քվեարկության սենյակում կուտակումներից ու խառնաշփոթից խուսափելու նպատակով ՏԸՀ նախագահը պետք է հսկի և պարբերաբար ստուգի, թե քվեարկողներից բացի ովքեր են ներկա տեղամասային կենտրոնում, և արդյո՞ք բոլորն ունեն տեղամասային կենտրոնում ներկա գտնվելու իրավունք:

Ի ր ա վ ի ճ ա կ 1.

Քիչ չեն դեպքերը, երբ քվեարկելուց հետո որոշ ընտրողներ մնում են տեղամասային կենտրոնում, երբեմն նաև անհարկի միջամտությամբ խանգարում այլ ընտրողների քվեարկության ազատ և անկաշկանդ իրականացմանը:

ԸՕ-ի 54-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ քվեարկելուց հետո քվեարկողն անհապաղ պետք է դուրս գա տեղամասային կենտրոնից:

Իրավիճակ 2.
Ինչպե՞ս վարվել եթե տեղամասային կենտրոնում գտնվելու իրավունք ունեցողների քանակը բավականին մեծ է, իսկ քվեարկության սենյակի չափերը՝ փոքր
Նման պարագայում ԸՕ-ի 54-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ ՏԸՀ նախագահն իրավունք ունի ընտրողներին քվեարկության սենյակ թողնել հերթականությամբ՝ մեկ-մեկ: Քվեարկության սենյակում միաժամանակ չի կարող գտնվել 15-ից ավելի ընտրող:
Սակայն ՏԸՀ նախագահը պետք է այնպես իրականացնի իր այդ լիազորությունը, որպեսզի մուտքի մոտ անհարկի հերթեր չառաջանան և տեղամասային կենտրոն եկած տվյալ տեղամասի յուրաքանչյուր ընտրող ներկայանա և մասնակցի քվեարկությանը:

Ընտրողների ցուցակներում ընդգրկվելը

Տվյալ տեղամասում քվեարկելու իրավունք ունեն ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում ընդգրկված անձինք՝ ընտրական տեղամասում հաշվառված ընտրողները, մշտապես բնակվող և հաշվառում չունեցող անձինք, որոնք այդ տեղամասի ընտրողների ցուցակում ընդգրկվել են բնակության վայրի մասին տեղեկանքի հիման վրա, տեղամաս իրենց ծառայողական պարտականությունները կատարելու համար գործուղված ոստիկանները, ինչպես նաև այդ ընտրական տեղամասի տարածքում գտնվող ստացիոնար բուժում իրականացնող բժշկական հաստատությունում քվեարկությանը մասնակցող ընտրողները:

!

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ, ՆՈՐՈՒՅԹ Է. **Գործուղման մեջ գտնվող ոստիկանության աշխատակիցները քվեարկում են այն ընտրական տեղամասում, որտեղ իրականացնում են իրենց լիազորությունները: Լիազոր մարմինը քվեարկությունից երկու օր առաջ ՏԸՀ-ի նախագահին է տրամադրում տեղամասում քվեարկող ոստիկանության ծառայողների լրացուցիչ ցուցակը:**

ՀԻՇԵՔ

Ընտրական հանձնաժողովներն իրավասու չեն որևէ մեկին ընդգրկելու ընտրողների ցուցակում, նույնիսկ տվյալ տեղամասի հաշվառման առկայության պարագայում,

Եթե անձը հաշվառված է ընտրական տեղամասի տարածքում, սակայն ընդգրկված չէ տվյալ տեղամասի ընտրողների վերջնական ցուցակում, ապա քաղաքացու անձը հաստատող փաստաթղթի հիման վրա ՏԸՀ նախագահը նրան տալիս է համապատասխան տեղեկանք՝ տվյալ տեղամասի ընտրողների ցուցակում ընդգրկված չլինելու վերաբերյալ և առաջարկում դիմել դատարան կամ լիազոր մարմնի համապատասխան ստորաբաժանում: Տվյալ անձը կարող է ընդգրկվել **ընտրողների լրացուցիչ ցուցակում** և մասնակցել քվեարկությանը դատարանի վճռի կամ լիազոր մարմնի համապատասխան ստորաբաժանման տեղեկանքի հիման վրա:

IV. Ընտրողների գրանցումը

Քվեարկությանը ներկայացած յուրաքանչյուր ընտրող նախ պետք է գրանցվի: Առանց սահմանված կարգով գրանցվելու՝ ընտրողը չի կարող քվեաթերթիկ ստանալ և քվեարկել:

Հանձնաժողովի՝ գրանցման համար պատասխանատու անդամը՝

- ստուգում է ընտրողի անձը հաստատող փաստաթուղթը.
- ընտրողների ցուցակում գտնում է նրա անունը, հայրանունը, ազգանունը և հերթական համարը.
- լրացնում է անձը հաստատող փաստաթղթի տվյալները.
- ընտրողն ստորագրում է այդ տվյալների դիմաց.
- միաժամանակ մեկից ավելի քվեարկություններ անցկացվելու դեպքում ընտրողն ստորագրում է յուրաքանչյուր քվեարկության համար նախատեսված առանձին սյունակում,
- այդ տվյալների դիմաց նախատեսված սյունակում ստորագրում է նաև հանձնաժողովի՝ գրանցման համար պատասխանատու անդամը.
- համապետական ընտրությունների ժամանակ դրոշմակնքում է զինծառայողի զինվորական վկայականի կամ զինվորական գրքույկի վերջին էջը:

Յուրաքանչյուր ընտրող գրանցվելիս պետք է ստորագրի ցուցակում իր անվան դիմաց՝ նախատեսված սյունակում:

Եթե ընտրողը չի կարող ինքնուրույն ստորագրել ընտրողների ցուցակում, ապա նրա խնդրանքով կարող է նրան օգնել մեկ այլ քաղաքացի, որը չպետք է լինի ընտրական հանձնաժողովի անդամ կամ վստահված անձ:

?

Ի՞նչ փաստաթղթերով կարելի է մասնակցել քվեարկությանը:

ԸՕ-ի 55-րդ հոդվածի 3-րդ կետում նշված են այն փաստաթղթերը, որոնցով կարելի է գրանցվել և մասնակցել քվեարկությանը.

- անձնագիր.
- անձնագրին փոխարինող փաստաթուղթ /9-րդ ձև/.
- զինվորական սպաների և ենթասպաների համար՝ նաև զինվորական վկայական.
- այլ զինծառայողների համար՝ զինվորական գրքույկ:

Համաձայն ԿԸՀ N 9/5-Ա, 22.08.2002. որոշման՝ ընտրական ցուցակում տեղ գտած տառասխալը կամ թվային սխալը, մնացած տվյալների համապատասխանության դեպքում, հիմք չեն ընտրողին քվեարկելուց զրկելու համար:

ՏԸՀ անդամը, այդ մասին տեղյակ պահելով ՏԸՀ նախագահին և վստահված անձանց, ընտրողների ցուցակի լրացուցիչ սյունակում նշում է ճշգրտված տվյալը և թույլատրում է ընտրողին մասնակցել քվեարկությանը:

!

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ, ՆՈՐՈՒՅԹ Է. **ՀՀ քաղաքացիների անձնագրերի վավերականության ժամկետը 10 տարի է: Սակայն համաձայն ԸՕ-ի 55-րդ հոդվածի 3-րդ կետի՝ ընտրողի անձնագրի վավերականության ժամկետի ավարտը հիմք չէ նրան քվեարկության չթողնելու համար:**

Ի ր ա վ ի ճ ա կ 3.

Երբեմն որոշ ընտրողներ ցանկանում են քվեարկել իրենց հարազատի կամ մեկ ուրիշի փոխարեն, այն պատճառաբանությամբ, թե նա չի կարող գալ քվեարկության և խնդրել է քվեարկել իր փոխարեն:

Լիազորված քվեարկությունն արգելվում է: Մեկից ավելի անգամ կամ ուրիշի փոխարեն քվեարկությունն արգելվում է:

V. Քվեաթերթիկ և քվեարկության ծրար տրամադրելը

Գրանցվելուց անմիջապես հետո ընտրողը մոտենում է հանձնաժողովի՝ քվեաթերթիկների և քվեարկության ծրարների տրամադրման համար պատասխանատու անդամին:

Վերջինս անջատում է քվեաթերթիկի ելունդը և քվեաթերթիկի ներքևի հատվածը քվեարկության ծրարի հետ միասին հանձնում է ընտրողին: Միաժամանակ մի քանի քվեարկություններ անցկացվելու դեպքում նույն գործողությունը կատարում է յուրաքանչյուր քվեաթերթիկի և քվեարկության ծրարի համար:

2007 թվականի մայիսի 12-ի Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ համամասնական ընտրակարգով ընտրությունների համար նախատեսված քվեաթերթիկներն ու քվեարկության ծրարը լինելու են նարնջագույն, իսկ մեծամասնական ընտրակարգով ընտրությունների համար նախատեսվածները՝ սպիտակ:

!

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ. Քվեարկության ծրարի և քվեաթերթիկի վրա եղած ավելորդ նշումները կարող են քվեաթերթիկը անվավեր ճանաչելու հիմք հանդիսանալ, ուստի անհրաժեշտ է ուշադիր զննել և ավելորդ նշումներ հայտնաբերելու պարագայում սխալ լրացված /վնասված/ քվեաթերթիկների համար սահմանված կարգով մարել դրանք՝ այդ մասին կազմելով համապատասխան արձանագրություն:

<u>Ի ր ա վ ի ճ ա կ 4.</u>

Հաճախ ընտրողն ուզում է հանձնաժողովի անդամից իմանալ, թե քվեաթերթիկի որ մասում է պետք նշում կատարել: Հանձնաժողովի անդամը ստիպված է պատասխանել ընտրողին՝ որևէ վանդակի վրա մատնացույց անելով, ինչը կարող է վստահված անձանց կողմից դիտվել որպես ուղղորդում:

Նման իրավիճակներից խուսափելու համար պետք է հետևել, որ տեղամասային կենտրոնում, քվեարկության խցիկում, կամ կենտրոնում որևէ տեսանելի տեղում փակցված լինեն քվեաթերթիկների նմուշներ:

VI. <u>Քվեարկությունը</u>

1. Ստանալով քվեաթերթիկ(ներ)ը և քվեարկության ծրար(ներ)ը ընտրողն անցնում է քվեարկության խցիկ՝ քվեարկելու:

2. V նշանն է դնում այն թեկնածուի, կուսակցության /կուսակցության դաշինքի/ անվան դիմացի քառակուսու մեջ, որի օգտին քվեարկում է:

Մեկ թեկնածու քվեարկվելու դեպքում ընտրողը, եթե կողմ է քվեարկելու, նշում է կատարում «կողմ եմ» բառերի, եթե դեմ՝ «դեմ եմ» բառերի դիմաց:

Քվեաթերթիկն ինքնուրույն լրացնելու հնարավորություն չունեցող քաղաքացին իրավունք ունի հանձնաժողովի նախագահին տեղեկացնելուց հետո քվեարկության խցիկ հրավիրելու այլ անձի, որը չպետք է լինի վստահված անձ: Բացի նշված դեպքից, քվեաթերթիկը լրացնելիս քվեարկության խցիկում այլ անձի ներկայությունն արգելվում է:

3. Քվեաթերթիկում նշում կատարելուց հետո քվեաթերթիկը դնում է ծրարի մեջ՝ համամասնական ընտրակարգով ընտրության համար նախատեսված նարնջագույն քվեաթերթիկը՝ նարնջագույն ծրարի մեջ, մեծամասնական ընտրակարգով ընտրության համար նախատեսված սպիտակ քվեաթերթիկը՝ սպիտակ ծրարի մեջ:

4. Դուրս է գալիս քվեարկության խցիկից և մոտենում քվեարկության ծրարը կնքող և քվեատուփի համար պատասխանատու անդամին:

5. Քվեարկության ծրարը կնքող և քվեատուփի համար պատասխանատու հանձնաժողովի անդամը իր նախաձեռնությամբ կամ վստահված անձի պահանջով կարող է համոզվել ընտրողի՝ տվյալ տեղամասում հաշվառված լինելու մեջ:

6. Քվեարկության ծրարը կնքող և քվեատուփի համար պատասխանատու անդամը կնքում է քվեարկության ծրարը, որից հետո բացում է քվեատուփի ճեղքը՝ ընտրողին հնարավորություն տալով քվեարկության ծրարը գցել քվեատուփի մեջ:

Եթե ընտրողը կարծում է, որ քվեաթերթիկը սխալ է լրացրել, ապա հանձնաժողովի նախագահի, իսկ նրա բացակայության դեպքում՝ տեղակալի հանձնարարությամբ նրան տրվում է նոր քվեաթերթիկ՝ ընտրողների ցուցակում նրա տվյալների դիմաց կատարելով համապատասխան նշում:

Սխալ լրացված /վնասված/ քվեաթերթիկը մարվում է անհապաղ՝ քվեաթերթիկը ներքևի ձախ կամ աջ անկյունից կտրվում է այնպես, որ հանձնաժողովի անդամների ստորագրությունները չվնասվեն: Մարելուց հետո՝ անհապաղ, ընտրողներին հատկացվող քվեաթերթիկների 100-ական կապից հանվում է քվեաթերթիկից առանձնացված ելունդ՝ նույն կարգով մարվում, իսկ մարված ելունդը ամրացվում մարված քվեաթերթիկին:
Մարման մասին գործավարության մատյանում կազմվում է համապատասխան արձանագրություն:

Քվեարկության փուլի առաջին կարևոր դրույթը ընտրական իրավունքի հավասարության սկզբունքի պահպանումն է:

ԸՕ-ում ամրագրված է.

- Քաղաքացիներն ընտրություններին մասնակցում են հավասար հիմունքներով:
- Հանձնաժողովը հավասար պայմաններ է ապահովում քաղաքացիների ընտրական իրավունքի իրականացման համար:
- Յուրաքանչյուր ընտրող յուրաքանչյուր քվեարկության համար ստանում է մեկ քվեաթերթիկ և մեկ քվեարկության ծրար:

Քվեարկության փուլի երկրորդ կարևոր դրույթը քվեարկության գաղտնիության սկզբունքի պահպանումն է:

ԸՕ-ի 6-րդ հոդվածում ամրագրված է.

- Ընտրություններում քվեարկությունը գաղտնի է:
- Ընտրողի համար քվեարկության գաղտնիությունը ոչ միայն իրավունք է, այլև պարտականություն:
- Քվեարկողի կամքի ազատ արտահայտման նկատմամբ վերահսկողությունն արգելվում է և հետապնդվում օրենքով:

ԸՕ-ը պարտադրում է ընտրողին՝ քվեարկել գաղտնի, քվեարկության խցիկում:

Բաց քվեարկությունը ոչ միայն կարող է դիտվել որպես քարոզչություն, այլև դրանով խախտվում է ընտրության ազատության սկզբունքը. հնարավոր է, որ ընտրողին սպառնալիքի, կաշառքի կամ այլ պատճառով հարկադրել են բաց քվեարկել:

Ի ր ա վ ի ճ ա կ 5.

Եթե ընտրողը քվեախցիկից դուրս է եկել առանց քվեաթերթիկը ծրարի մեջ դնելու, ապա հանձնաժողովի անդամը /նախագահը, տեղակալը/ պահանջում է ընտրողից անհապաղ վերադառնալ քվեախցիկ և քվեաթերթիկը դնել ծրարի մեջ:

Բուժհիմնարկներում քվեարկության կազմակերպումը

Ստացիոնար բուժում իրականացնող հաստատությունում քվեարկությանը մասնակցող ընտրողների թվից ելնելով, բուժհիմնարկում քվեարկությունը

կազմակերպվում է այնպես, որ շրջիկ արկղի միջոցով քվեարկություն անցկացնող անդամը հնարավորություն ունենա կատարել վիճակահանության արդյունքում իրեն բաժին ընկած մյուս գործառույթները:

! **Վստահված անձինք, դիտորդները, ՁԼՄ ներկայացուցիչները կարող են ներկա գտնվել շրջիկ արկղի միջոցով քվեարկության իրականացմանը: Հանձնաժողովի անդամին անհրաժեշտության դեպքում կարող է ուղեկցել ոստիկանության աշխատակիցը:**

! **Տեղամասային կենտրոնում տվյալ թեկնածուի, կուսակցության, կուսակցությունների դաշինքի վստահված անձի ներկայությունն արգելք չէ շրջիկ արկղի միջոցով քվեարկության իրականացմանը նույն թեկնածուի, կուսակցության, կուսակցությունների դաշինքի մեկ այլ վստահված անձի՝ ներկա գտնվելու համար:**

<u>Հանձնաժողովի նախագահը</u>՝

1. **մինչև ժամը 8.00-ն** հանձնաժողովի անդամների և հանձնաժողովի նիստին ներկա գտնվելու իրավունք ունեցող անձանց ներկայությամբ ստուգում է շրջիկ արկղի դատարկ լինելը, **փակում և կնքում** է շրջիկ արկղը.

2. շրջիկ արկղի միջոցով քվեարկություն անցկացնող անդամին է տրամադրում ստացիոնար բուժում իրականացնող հաստատությունում /հաստատություններում/ քվեարկությանը մասնակցող ընտրողների լրացուցիչ ցուցակները, շրջիկ արկղը, ստացիոնար բուժում իրականացնող բժշկական հաստատությունում քվեարկությանը մասնակցող ընտրողների լրացուցիչ ցուցակը, այդ ցուցակում ընդգրկված ընտրողների թվից մինչև 3 տոկոս ավելի քանակով քվեաթերթիկներ և քվեարկության ծրարներ՝ այդ մասին համապատասխան գրառում կատարելով գործավարության մատյանում:

! **Ստացիոնար բուժում իրականացնող բժշկական հաստատությունում քվեարկությունն ավարտվում է ժամը 18:00-ին:**

<u>Ստացիոնար բուժում իրականացնող բժշկական հաստատությունում քվեարկության ավարտից հետո հանձնաժողովի անդամը՝</u>

1. փակում՝ հատուկ կապիչով կապում է, շրջիկ արկղը և անհապաղ վերադառնում ՏԸՀ,
2. հանձնաժողովի նախագահին է հանձնում
   - ✓ շրջիկ արկղը,
   - ✓ չօգտագործված, ընտրողի կողմից ոչ ճիշտ լրացված և հետ վերադարձված քվեաթերթիկները,

- ✓ չօգտագործված քվեարկության ծրարները,
- ✓ ստացիոնար բուժում իրականացնող բժշկական հաստատությունում քվեարկությանը մասնակցող ընտրողների լրացուցիչ ցուցակը,
- ✓ օգտագործված քվեաթերթիկների ելունդները:

3. Շրջիկ արկղը տեղադրվում է տեղամասային կենտրոնում, բոլորի համար տեսանելի տեղում:

<u>Հանձնաժողովի նախագահը, քարտուղարը կամ հանձնաժողովի անդամներից որևէ մեկը, ում կհանձնարարի հանձնաժողովի նախագահը</u>՝ ոչ ուշ քան մինչև ժամը 20.00-ն, տեղամասային կենտրոնում ներկա գտնվելու իրավունք ունեցող անձանց ներկայությամբ բացում է շրջիկ արկղը, հանում քվեարկության մեկ ծրար:

<u>Քվեարկության ծրարները կնքող և քվեատուփի համար պատասխանատու անդամը</u> կնքում է քվեարկության ծրարը և գցում քվեատուփի մեջ: Այս գործողությունը կրկնվում է շրջիկ արկղում առկա քվեարկության բոլոր ծրարների համար և պետք է ավարտվի մինչև ժամը 20.00-ն:

<u>Քվեարկության ընթացքում ՏԸՀ նախագահի, նախագահի տեղակալի և քարտուղարի այլ լիազորությունները</u>

Ի հավելումն այն լիազորությունների, որոնք նկարագրվել են վերոնշյալ բաժիններում, ՏԸՀ նախագահը, նախագահի տեղակալը և քարտուղարը ունեն նաև հետևյալ լիազորությունները.

ՏԸՀ նախագահը՝

- ժամը 8.00-ին հայտարարում է ընտրական տեղամասը բացվելու և քվեարկությունը սկսվելու մասին.
- **ժամը 11-ին, 14-ին, 17-ին և 20-ին** զանգահարում է ԸԸՀ և հաղորդում է քվեարկության մասնակիցների թիվը.
- պահպանում է կարգուկանոնը տեղամասային կենտրոնում.
- կարգավորում է ընտրողների հոսքը տեղամասային կենտրոն.
- ըստ անհրաժեշտության քվեաթերթիկներ և քվեարկության ծրարներ է տրամադրում հանձնաժողովի՝ քվեաթերթիկների և քվեարկության ծրարների տրամադրման համար պատասխանատու անդամին, նրանից ընդունելով օգտագործված քվեաթերթիկների ելունդները.
- ընդունում է ներկայացված առաջարկությունները, դիտողությունները և բողոքները, անհրաժեշտության դեպքում ձեռնարկում միջոցներ.
- բացառությունների և թյուրիմացությունների դեպքում կարգավորում է իրավիճակը.
- կազմակերպում է ՏԸՀ անդամների ընդմիջումն այնպես, որ չխաթարվի հանձնաժողովի աշխատանքը.

- պահպանում է համագործակցությունը ՏԸՀ բոլոր անդամների, վստահված անձանց և դիտորդների միջև:

ՏԸՀ նախագահի տեղակալը՝

- անհրաժեշտության դեպքում փոխարինում է նախագահին և կատարում է իր և նախագահի լիազորությունների շրջանակներում նրա կողմից տրված հանձնարարությունները:

ՏԸՀ քարտուղարը՝

- գրանցում է տեղամասային կենտրոն վստահված անձանց, դիտորդների ներկայանալու և դուրս գալու ժամանակը, ինչպես նաև հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ գրառումներ կատարում գործավարության մատյանում:

VII. Տեղամասային կենտրոնի փակումը

Տեղամասային կենտրոնի փակման համար նշանակված ժամից մոտավորապես 15 րոպե առաջ ընտրողներին հայտարարեք, որ շուտով տեղամասային կենտրոնը փակվելու է:

🕗 **Ժամը 20:00**

ՏԸՀ նախագահը՝

- արգելում է ընտրողների մուտքը տեղամասային կենտրոն.
- տեղամասային կենտրոնում գտնվող չքվեարկած ընտրողներին քվեարկելու հնարավորություն է տալիս.
- փակում է քվեատուփի ճեղքը.
- դուրս է հրավիրում ՏԸՀ նիստին ներկա գտնվելու իրավունք չունեցող բոլոր անձանց.
- փակում է տեղամասային կենտրոնը:

ՏԸՀ-ն սկսում է քվեարկության արդյունքների ամփոփման նիստը:

VIII. Քվեարկության արդյունքների ամփոփումը

ՀԻՇԵՔ

Քվեարկության արդյունքների ամփոփումն սկսվում է անմիջապես քվեարկության ավարտից հետո և ընթանում է առանց ընդհատման մինչև քվեարկության արդյունքների ամփոփման վերաբերյալ արձանագրության կազմումը:

Քվեարկության արդյունքների ամփոփումը կատարվում է հենց քվեարկության սենյակում:

Հնարավորություն տվեք վստահված անձանց, դիտորդներին և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներին կանգնել կամ նստել հանձնաժողովի անդամների անմիջապես հետևում այնպես, որ նրանք կարողանան հետևել աշխատանքային տարածքում կատարվող բոլոր գործողություններին:

Միաժամանակ մի քանի ընտրություն անցկացվելու դեպքում ՏԸՀ-ում քվեարկության արդյունքների ամփոփման ժամանակ քվեատուփը բացելուց հետո ՏԸՀ-ի նիստի աշխատանքներին շարունակում են մասնակցել համապատասխան ընտրության համար գրանցված թեկնածուների (կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների) վստահված անձինք:

Մյուս ընտրության համար գրանցված թեկնածուների վստահված անձինք մնում են ՏԸՀ-ում, սակայն չեն իրականացնում ԸՕ-ով իրենց վերապահված իրավունքները մինչև այդ ընտրության քվեարկության արդյունքների ամփոփման աշխատանքների վերսկսվելը:

! ***ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ, ՆՈՐՈՒՅԹ է.*** **Համաձայն ԸՕ-ի 47-րդ հոդվածի 2-րդ կետի՝ քվեարկության արդյունքների ամփոփման գործընթացը վստահված անձանց, դիտորդների, ԶԼՄ-ների ներկայացուցիչների կողմից կարող է անարգել տեսանկարահանվել:**

ա) Քվեարկության սենյակի կահավորանքը քվեարկության արդյունքների ամփոփման ժամանակ

Իրար միացված երկու-երեք սեղան թույլ կտա ստեղծել բավականաչափ տարածություն քվեաթերթիկների հաշվարկումն իրականացնելու համար:



Սեղանների վրա դասավորեք տեսակավորման համար նախապես պատրաստված պիտակները:

Քվեարկության արդյունքների ամփոփման փուլում անհրաժեշտ է խստորեն պահպանել ԸՕ-ով սահմանված գործողությունների հաջորդականությունը:

բ) Քվեարկության արդյունքների ամփոփման սկիզբը

! **Առաջին հերթին ամփոփվում է համամասնական ընտրակարգով քվեարկության արդյունքները, այնուհետև նույն կարգով ամփոփվում է մեծամասնական ընտրակարգով քվեարկության արդյունքները**

1. Հաշվարկվում են չօգտագործված քվեարկության ծրարները, չօգտագործված, ընտրողի կողմից ոչ ճիշտ լրացված և հետ վերադարձված, տպագրական խոտանի պատճառով սահմանված նմուշից տարբերվող կամ կրկնվող համարով քվեաթերթիկները, ապա քվեաթերթիկները՝ ներքևի աջ կամ ձախ անկյունից, իսկ քվեարկության ծրարները՝ ցանկացած անկյունից կտրելով մարվում է: Քվեաթերթիկները և չօգտագործված քվեարկության ծրարները, փաթեթավորում և կնքում է փաթեթները.
2. Ըստ հերթական համարների՝ դասավորվում են օգտագործված քվեաթերթիկների ելունդները և հաշվարկվում դրանց թիվը, ապա փաթեթավորում է օգտագործված քվեաթերթիկների ելունդները եւ կնքում փաթեթը.
3. Ընտրողների ցուցակների, այդ թվում՝ լրացուցիչ ցուցակների հիման վրա, հաշվարկվում է ընտրողների ընդհանուր թիվը (յուրաքանչյուր ընտրակարգի համար առանձին), որից հետո փաթեթավորում է նշված ցուցակները եւ կնքում փաթեթը:
4. ընտրողների ցուցակներում, այդ թվում՝ լրացուցիչ ցուցակներում առկա ստորագրությունների հիման վրա հաշվարկում է քվեաթերթիկներ ստացած ընտրողների (քվեարկության մասնակիցների) թիվը, որից հետո փաթեթավորում է նշված ցուցակները և կնքում փաթեթը:

Ազգային ժողովի ընտրությունների դեպքում ընտրողների ցուցակների փաթեթը (ծրարը) տեղադրվում է Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով ընտրությունների ընտրական փաստաթղթերի համար նախատեսված պարկում:

Վերը նշված հաշվարկների արդյունքները հրապարակվում և արձանագրվում են գործավարության մատյանում:

Ավարտելով թվարկված բոլոր գործողությունները՝ ՏԸՀ-ն կազմում է քվեարկության մասնակիցների թվի վերաբերյալ ԿԸՀ կողմից հաստատված ձևի արձանագրությունը:

ՀԻՇԵՔ

Ոչ մի դեպքում չի կարելի վերադառնալ նախորդ /ավարտված/ քայլի արդյունքներին և փոփոխել դրանք:

գ.) Քվեարկության ծրարների և քվեաթերթիկների տեսակավորումը

Հանձնաժողովի նախագահը բացում է քվեատուփը և մեկ առ մեկ սահմանված կարգով կատարում է քվեարկության ծրարների և քվեաթերթիկների տեսակավորումը:

<u>Չսահմանված նմուշի ծրարներ</u> են բոլոր այն ծրարները, որոնք.

- տարբերվում են սահմանված նմուշից,
- կնքված չեն,
- այլ կնիքով են կնքված,
- պարունակում են ընտրողի ինքնությունը բացահայտող նշում /նշումներ/

Այդ ծրարները առանց բացելու դրվում են չսահմանված նմուշի ծրարների փաթեթի մեջ:

Չսահմանված նմուշի ծրարների փաթեթի մեջ են դրվում նաև այն ծրարները, որոնք.

- քվեաթերթիկ չեն պարունակում,
- պարունակում են մեկից ավելի քվեաթերթիկներ,
- պարունակում են չսահմանված նմուշի քվեաթերթիկ /քվեաթերթիկներ/:

Վերը նշված վերջին երկու դեպքերում քվեաթերթիկը /քվեաթերթիկները/ դրվում են ծրարի մեջ, այնուհետև այդ ծրարը դրվում է չսահմանված նմուշի ծրարների փաթեթի մեջ:

1. Չսահմանված նմուշի ծրարները, դրանցում գտնվող քվեաթերթիկների հետ միասին, անհապաղ մարվում են:

2. Քվեատուփից հանված քվեարկության ծրարը, ինչպես նաև քվեարկության ծրարից հանված քվեաթերթիկը հանձնաժողովի նախագահը ցուցադրում է տեղամասային կենտրոնում ներկա գտնվող անձանց:

Քվեարկության ծրարների և քվեաթերթիկների սահմանված նմուշի կամ վավերականության վերաբերյալ տարակարծություն լինելու դեպքում հարցը որոշվում է քվեարկությամբ: Հանձնաժողովի նախագահի կարծիքին առարկություն լինելու դեպքում քվեարկության է դրվում առարկողի առաջարկությունը:

Քվեաթերթիկների վավերականությունը

Սահմանված նմուշի քվեաթերթիկը համարվում է անվավեր, եթե՝

- մեկից ավելի թեկնածուների (կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների) օգտին նշումներ է պարունակում.
- մեկ թեկնածու քվեարկելու դեպքում միաժամանակ թեկնածուի օգտին և «դեմ եմ» բառերի դիմաց նշումներ է պարունակում.
- չի պարունակում որևէ նշում.
- պարունակում է ընտրողի ինքնությունը բացահայտող նշում.
- ստորագրված չէ.
- խախտված է ԸՕ 57 հոդվածով սահմանված՝ քվեաթերթիկում նշում կատարելու կարգը:

ՀԻՇԵՔ

Յուրաքանչյուր քվեաթերթիկ որևէ ընտրողի կամաարտահայտությունն է, և չի կարելի կամայականորեն վարվել նրա հետ: Քվեաթերթիկը վավեր է, եթե ընտրողի մտադրությունը հստակ է և աներկբա, ինչպես նաև բացակայում են նշումներ, որոնք կարող են բացահայտել ընտրողի ինքնությունը:



3. Հաշվարկված թվերը հրապարակվում են և արձանագրվում գործավարության մատյանում:

Տեսակավորման ողջ ընթացքում հանձնաժողովի անդամներին արգելվում է նշումներ կատարել, ինչպես նաև իրենց մոտ ունենալ գրիչներ, մատիտներ և նշումներ կատարելու այլ առարկաներ:

! **Վստահված անձն իրավունք ունի ՏԸՀ նախագահի, տեղակալի, քարտուղարի կամ հանձնաժողովի անդամներից որևէ մեկի ներկայությամբ, ում կհանձնարարի հանձնաժողովի նախագահը, անարգել ծանոթանալու քվեարկության ծրարներին, քվեարկած քվեաթերթիկներին և դրանցում կատարված նշումներին:**

4. Հաշվարկված և տեսակավորված քվեարկության ծրարները և քվեաթերթիկները ԿԸՀ սահմանած կարգով փաթեթավորվում են, իսկ փաթեթները՝ կնքվում:

դ.) ***Տեղամասում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրություն կազմելը***

1. Հիմք ընդունելով կատարված հաշվարկների տվյալները /գործավարության մատյանում արձանագրված/՝ ՏԸՀ-ն կազմում է տեղամասում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրություն, որի ձևաթուղթը տրամադրվում է ՏԸՀ-ին:

2. Արձանագրությունն ստորագրում են հանձնաժողովի նիստին ներկա անդամները, այն կնքում է հանձնաժողովի նախագահը:

3. Եթե հանձնաժողովի որևէ անդամ արձանագրության տվյալների վերաբերյալ ունի հատուկ կարծիք, ապա նա ներկայացնում է իր գրավոր կարծիքը, որը կցվում է արձանագրությանը, իսկ իր ստորագրության կողքին այդ մասին կատարում է նշում:

!

Արձանագրության կազմումը հանձնաժողովը պետք է ավարտի քվեարկության ավարտից ոչ ուշ, քան 10 ժամ հետո:

4. Արձանագրությունը կազմվում է **չորս օրինակից**.

- մեկը փաթեթավորվում է հիմք համարվող փաստաթղթերի հետ,
- երկու օրինակը ներկայացվում է ԸԸՀ,
- մեկ օրինակն անմիջապես փակցվում է տեղամասային կենտրոնում՝ հստակ տեսանելի տեղում, ընդ որում համաձայն ԸՕ-ի՝ **դա պետք է արվի ոչ ուշ, քան կնիքը, գործավարության մատյանը, արձանագրությունների մյուս երկու օրինակը և փաթեթավորված ընտրական փաստաթղթերի պարկը տեղամասային կենտրոնից հանելը**:

Փաստաթղթերի փաթեթների և պարկի վրա անպայման պետք է առկա լինեն հանձնաժողովի երեք անդամների ստորագրությունները, ցանկության դեպքում փաթեթների վրա կարող են ստորագրել նաև հանձնաժողովի մյուս անդամները և /կամ/ վստահված անձինք, որի մասին համապատասխան գրառում է կատարվում գործավարության մատյանում:

5. Դիտորդի, վստահված անձի կամ հանձնաժողովի անդամի պահանջով նրան տրվում է տեղամասում քվեարկության մասնակիցների թվի վերաբերյալ, ինչպես նաև տեղամասում քվեարկության արդյունքների վերաբերյալ կազմված արձանագրություններից քաղվածք՝ վավերացված հանձնաժողովի նախագահի /տեղակալի/ և քարտուղարի ստորագրություններով և հանձնաժողովի կնիքով:

Չի բացառվում արձանագրություններում թվաբանական սխալների առկայությունը: Նման դեպքերում ՏԸՀ-ի նախագահը և քարտուղարը վերացնում են այդ սխալները՝ ուղղումները վավերացնելով իրենց ստորագրություններով:

ՀԻՇԵՔ

Եղակետային տվյալների փոփոխություն չի կատարվում:
Եղակետային են համարվում այն տվյալները, որոնք ստացվել են ընտրողների ցուցակներում ստորագրությունների, ելունդների, քվեարկության ծրարների կամ քվեաթերթիկների հաշվարկման արդյունքում:

ե.) ***Արձանագրությունների և այլ նյութերի փոխանցումը ԸԸՀ***

Քվեարկության ավարտից հետո **ոչ ուշ, քան 12 ժամվա** ընթացքում ԿԸՀ սահմանած կարգով ԸԸՀ են ներկայացվում.

- ✓ փաթեթավորված և պարկի մեջ դրված փաստաթղթերը
- ✓ քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրության երկու օրինակը
- ✓ քվեարկության մասնակիցների թվի վերաբերյալ արձանագրությունը
- ✓ գործավարության մատյանը
- ✓ կնիքը
- ✓ դրոշմակնիքը /եթե հատկացվել է/
- ✓ քվեատուփը /քվեատուփերը/
- ✓ շրջիկ արկղը /եթե հատկացվել է/
- ✓ քվեախցիկները:

! **ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ. Հետևյալ նյութերը չեն փաթեթավորվում, դրանք ԸԸՀ-ին են փոխանցվում առանց փաթեթավորման:**

- ✓ ***<u>քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրության երկու օրինակը</u>***
- ✓ ***<u>քվեարկության մասնակիցների թվի վերաբերյալ արձանագրությունը</u>***
- ✓ ***<u>գործավարության մատյանը</u>***
- ✓ ***<u>կնիքը</u>***
- ✓ ***<u>դրոշմակնիքը /եթե հատկացվել է/.</u>***

! **ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ. Վստահված անձինք, դիտորդները և ԶԼՄ ներկայացուցիչները կարող են իրենց միջոցներով ուղեկցել ընտրական փաստաթղթերն ԸԸՀ տեղափոխող ավտոմեքենան:**

ԸԸՀ-ՈՒՄ ԸՆՏՐԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

ԸԸՀ-ում ստուգվում է տեղամասում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունների կազմման վավերականությունը:

ԸԸՀ-ը համեմատում է կնիքի համարը տեղամասային ընտրական հանձնաժողովի արձանագրության կնիքի համարի հետ, որից հետո ԸԸՀ-ի գործավարության մատյանում կատարում է գրառում տեղամասային ընտրական հանձնաժողովի կնիքի, դրոշմակնիքների ստացման մասին:

ՏԸՀ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Ընտրական հանձնաժողովի բոլոր անդամները պետք է իմանան, որ.

1. ՀՀ Քրեական օրենսգրքի 150 հոդվածի համաձայն.

«Հոդված 150. Ընտրությունների կամ քվեարկության արդյունքները կեղծելը:
Հանրաքվեի կամ ընտրությունների ընթացքում ձայներն ակնհայտ սխալ հաշվելը կամ ընտրությունների արդյունքները, այդ թվում՝ արձանագրությունները, դրանց պատճենները, այլ ընտրական փաստաթղթերը և դրանց քաղվածքները ակնհայտ սխալ տվյալներով հաստատելը, քվեատուփ հափշտակելը, համակարգչում ակնհայտ սխալ տվյալներ մուտքագրելը, մուտքագրված տվյալները փոփոխելը, ինչպես նաեւ որեւէ այլ եղանակով ընտրությունների կամ քվեարկության արդյունքները կեղծելը կամ այդ նպատակով ընտրական փաստաթղթերը վերադաս ընտրական մարմիններին սահմանված ժամկետում չներկայացնելը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից հինգ տարի ժամկետով:»

2. ՀՀ քրեական օրենսգրքի 154^5 հոդվածի համաձայն.

«Վստահված անձին, ընտրական հանձնաժողովի անդամին, դիտորդին կամ զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչին ընտրական փաստաթղթերին սահմանված դեպքերում եւ կարգով ծանոթանալուն խոչընդոտելը, ընտրական հանձնաժողովի արձանագրությունների պատճենները, քաղվածքները չտալը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ վեց ամսից երկու տարի ժամկետով:»

ՀԱՎԵԼՎԱԾ

Տեղեկանքների և արձանագրությունների ձևեր

ՏԵՂԵԿԱՆՔ

Քաղաքացի

_____

(ազգանուն, անուն, հայրանուն)

Անձնագիր սերիա_____համար_____

Հաշվառված_____փողոց_____

(գյուղ, քաղաք)

շենք_____բնակարան/տուն/_____

Հաշվառված է թիվ_____ընտրատարածքի թիվ_____ընտրական տեղամասի տարածքում, սակայն տեղամասի ընտրողների ցուցակներում ընդգրկված չէ:

Ներկայացվում է լիազոր մարմնի համապատասխան ստորաբաժանում կամ առաջին ատյանի դատարան

Տեղամասային ընտրական
հանձնաժողովի նախագահ _____

(ստորագրություն)

Կ.Տ.

«-------»----------2007թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՀԱՄԱՄԱՄՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«____» _____200 թ.
(քվեարկության օրը, ամիսը, տարին)

_____ մարզ, _____ համայնք
(տեղամասային ընտրական հանձնաժողովի գտնվելու վայրը)

Արձանագրություն

թիվ _____ ընտրատարածքի թիվ _____ տեղամասում

քվեարկության արդյունքների

Տեղամասային ընտրական հանձնաժողովը,
հիմք ընդունելով տեղամասում քվեարկության արդյունքները,
արձանագրում է՝

1.Ընտրողների ընդհանուր թիվը՝ ըստ ընտրողների ցուցակների	----------
2.Հանձնաժողովին հատկացված քվեարկության ծրարների թիվը,	----------
3.Հանձնաժողովին հատկացված քվեաթերթիկների թիվը, ելունդների համարները	(Ա)---------- N ----------
4.Չօգտագործված քվեարկության ծրարների թիվը	----------
5.Մարված (չօգտագործված, ոչ ճիշտ լրացված և հետ վերադարձված) քվեաթերթիկների թիվը	(Գ)----------
6.Գրանցված ընտրողների թիվը՝ ըստ ստորագրությունների	(Բ)----------
7. Անվավեր քվեաթերթիկների թիվը	($դ_2$)----------

8.Օգտագործված քվեաթերթիկների ելունդների թիվը (Ե)----------

9. Յուրաքանչյուր կուսակցությանը, կուսակցությունների դաշինքին կողմ քվեարկված քվեաթերթիկների թիվը

Կուսակցության, կուսակցությունների դաշինքի անվանումը	Կողմ քվեարկված քվեաթերթիկների թիվը
1.	
2.	
3.	
4.	
5.	
6.	
7.	
8.	
9.	
10.	

10. Կողմ քվեարկված քվեաթերթիկների ընդհանուր թիվը (մեկ թեկնածու քվեարկվելու դեպքում չի լրացվում) ----------

11. Կուսակցությանը կամ կուսակցությունների դաշինքին դեմ քվեարկված քվեաթերթիկների թիվը (լրացվում է մեկ թեկնածու քվեարկվելու դեպքում) ----------

12. Սահմանված նմուշի քվեարկության ծրարների թիվը (Զ)----------

13. Վավեր քվեաթերթիկների թիվը (դ$_1$)---------- ---------

14.Անճշտությունների չափը (ա)----------

Տեղամասում անճշտությունները որոշվում են՝

1. Առաջին անճշտության չափը $ա_1$ = / Ա - (Գ + Դ)/

(Դ=դ$_1$+դ$_2$)

2. Երկրորդ անճշտության չափը $ա_2$ = Դ - Բ

3. Երրորդ անճշտության չափը $ա_3$ = Ե - Դ

_____

4.Չորրորդ անճշտության չափը $ա_4$ = Զ - Դ

_____

5 Անճշտությունների չափը (14) $ա = ա_1 + ա_2 + ա_3 + ա_4$

Հանձնաժողովի նախագահ՝ _____
(ազգանուն, անուն, հայրանուն
ստորագրություն)

Նախագահի տեղակալ՝ _____
(ազգանուն, անուն, հայրանուն
ստորագրություն)

Քարտուղար՝ _____
(ազգանուն, անուն, հայրանուն
ստորագրություն)

Անդամներ՝ _____
(ազգանուն, անուն, հայրանուն
ստորագրություն)

_____
(ազգանուն, անուն, հայրանուն
ստորագրություն)

_____
(ազգանուն, անուն, հայրանուն
ստորագրություն)

_____
(ազգանուն, անուն, հայրանուն
ստորագրություն)

_____
(ազգանուն, անուն, հայրանուն
ստորագրություն)

_____
(ազգանուն, անուն, հայրանուն
ստորագրություն)

Կ.Տ. Արձանագրությունը կազմվել է «____» _____ 200 թ., ժամը____-ին:

Թիվ _____ընտրատարածքային ընտրական հանձնաժողով

Արձանագրությունն ընդունվել է «____» _____ 200 թ., ժամը____-ին:

Կ.Տ.

Հանձնաժողովի նախագահ _____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ՄԵԾԱՄԱՄՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«____» _____200 թ
(քվեարկության օրը, ամիսը, տարին)

Ընտրատարածք թիվ _____

_____ մարզ, _____ համայնք
(տեղամասային ընտրական հանձնաժողովի գտնվելու վայրը)

Արձանագրություն

թիվ _____ ընտրատարածքի թիվ _____ տեղամասում

քվեարկության արդյունքների

Տեղամասային ընտրական հանձնաժողովը,
հիմք ընդունելով տեղամասում քվեարկության արդյունքները,
արձանագրում է՝

1. Ընտրողների ընդհանուր թիվը՝ ըստ ընտրողների ցուցակների	----------
2.Հանձնաժողովին հատկացված քվեարկության ծրարների թիվը,	
3.Հանձնաժողովին հատկացված քվեաթերթիկների թիվը, ելունդների համարները	Ա)---------- N ----------
4.Չօգտագործված քվեարկության ծրարների թիվը	----------
5.Մարված (չօգտագործված, ոչ ճիշտ լրացված և հետ վերադարձված) քվեաթերթիկների թիվը	(Գ)---------- -
6.Գրանցված ընտրողների թիվը՝ ըստ ստորագրությունների	(Բ)----------

7. Անվավեր քվեաթերթիկների թիվը

($դ_2$)----------

8.Օգտագործված քվեաթերթիկների ելունդների թիվը

(Ե)----------

9. Յուրաքանչյուր թեկնածուին կողմ քվեարկված քվեաթերթիկների թիվը

Թեկնածուի ազգանունը, անունը, հայրանունը	Կողմ քվեարկված քվեաթերթիկների թիվը
1.	
2.	
3.	
4.	
5.	
6.	
7.	
8.	
9.	
10.	

10.Կողմ քվեարկված քվեաթերթիկների ընդհանուր թիվը (մեկ թեկնածու քվեարկվելու դեպքում չի լրացվում) ----------

11.Թեկնածուին դեմ քվեարկված քվեաթերթիկների թիվը (լրացվում է մեկ թեկնածու քվեարկվելու դեպքում) ----------

12. Սահմանված նմուշի քվեարկության ծրարների թիվը (Զ)----------

13. Վավեր քվեաթերթիկների թիվը

($դ_1$)----------

14.Անճշտությունների չափը

(ա)----------

Տեղամասում անճշտությունները որոշվում են՝

1. Առաջին անճշտության չափը $ա_1 = / Ա - (Գ + Դ)/$

($Դ=դ_1+դ_2$)

2. Երկրորդ անճշտության չափը $ա_2 = Դ - Բ$

3. Երրորդ անճշտության չափը $ա_3$ = Ե - Դ

4.Չորրորդ անճշտության չափը $ա_4$ = Զ - Դ

5 Անճշտությունների չափը (14) $ա = ա_1 + ա_2 + ա_3 + ա_4$

Հանձնաժողովի նախագահ՝ _____
(ազգանուն, անուն, հայրանուն ստորագրություն)

Նախագահի տեղակալ՝ _____
(ազգանուն, անուն, հայրանուն ստորագրություն)

Քարտուղար՝ _____
(ազգանուն, անուն, հայրանուն ստորագրություն)

Անդամներ՝ _____
(ազգանուն, անուն, հայրանուն ստորագրություն)

_____
(ազգանուն, անուն, հայրանուն ստորագրություն)

_____
(ազգանուն, անուն, հայրանուն ստորագրություն)

_____
ազգանուն, անուն, հայրանուն ստորագրություն)

_____
(ազգանուն, անուն, հայրանուն ստորագրություն)

_____
(ազգանուն, անուն, հայրանուն ստորագրություն)

_____
(ազգանուն, անուն, հայրանուն ստորագրություն)

Կ.Տ. Արձանագրությունը կազմվել է «____» _____ 200 թ., ժամը____-ին:

Թիվ _____ընտրատարածքային ընտրական հանձնաժողով

Արձանագրությունն ընդունվել է «____» _____ 200 թ., ժամը____-ին:

Կ.Տ.

Հանձնաժողովի նախագահ_____

«____» _____200 թ.
(քվեարկության օրը, ամիսը, տարին)

Արձանագրություն
քվեարկության մասնակիցների թվի վերաբերյալ

_____ մարզ, _____ համայնք
(տեղամասային ընտրական հանձնաժողովի գտնվելու վայրը)

թիվ _____ ընտրատարածքի թիվ _____ տեղամասում

Տեղամասային ընտրական հանձնաժողովը,
հիմք ընդունելով տեղամասում ընտրողների ցուցակներում
(այդ թվում՝ լրացուցիչ ցուցակներում) ընտրողների ստորագրությունները,

արձանագրում է՝

_____ քվեարկությանը մասնակցել է
նշվում է ընտրության անվանումը

_____ընտրող:

Հանձնաժողովի նախագահ՝ _____
(ազգանուն, անուն, հայրանուն ստորագրություն)

Նախագահի տեղակալ՝ _____
(ազգանուն, անուն, հայրանուն ստորագրություն)

Քարտուղար՝ _____
(ազգանուն, անուն, հայրանուն ստորագրություն)

Անդամներ՝ _____
(ազգանուն, անուն, հայրանուն ստորագրություն)

_____
(ազգանուն, անուն, հայրանուն ստորագրություն)

_____
(ազգանուն, անուն, հայրանուն ստորագրություն)

_____
(ազգանուն, անուն, հայրանուն ստորագրություն)

_____
(ազգանուն, անուն, հայրանուն ստորագրություն)

_____ _____(ազգանուն,
անուն, հայրանուն ստորագրություն)

Կ.Տ.

«____» _____200 թ.
(քվեարկության օրը, ամիսը, տարին)

Քաղվածք

քվեարկության մասնակիցների թվի վերաբերյալ արձանագրությունից

(տրվում է վստահված անձանց, հանձնաժողովի անդամին, դիտորդներին, ՁԼՄ-ների ներկայացուցիչներին)

թիվ _____ ընտրատարածքի թիվ _____ տեղամասում

Տեղամասային ընտրական հանձնաժողովը,
հիմք ընդունելով տեղամասում ընտրողների ցուցակներում
(այդ թվում՝ լրացուցիչ ցուցակներում) ընտրողների ստորագրությունները,

արձանագրում է՝

_____քվեարկությանը մասնակցել է
նշվում է ընտրության անվանումը

_____ընտրող:

Հանձնաժողովի նախագահ՝ _____
(ազգանուն, անուն, հայրանուն ստորագրություն)
կամ նախագահի տեղակալ

Քարտուղար՝ _____
(ազգանուն, անուն, հայրանուն ստորագրություն)

ԳՐՔԻ ՎԱՃԱՌՔԸ ԱՐԳԵԼՎՈՒՄ Է